

Արխայիկ մտածողություն

Մաս 1. Տեսլականը և նպատակը՝ քննադատական մտածողության անհրաժեշտ մաս

Գևորգ Տեր-Գաբրիելյան

Փետրվարի 15, 2018 թ.

Տեսանյութ

Հրապարակված՝ մայիսի 7, 2018

Պատրաստված՝ [Եվրասիա համագործակցություն հիմնադրամի](#) կողմից

Գևորգ Տեր-Գաբրիելյան (ԳՏԳ) – Ժողովուրդ ջան, ուրեմն սա մեր հերթական [Jam Session](#)-ն է լինելու, որը ես ուզում եմ իրականացնել՝ հաշվի առնելով այն պահը, այն հանգրվանը մեր Jam Session-ների մեթոդաբանության կառուցման, որում մենք գտնվում ենք: Մենք հիմա պատրաստում ենք քննադատական մտածողության կուրսի վերաբերյալ հաջորդ փուլը և մարտ ամսին ունենալու ենք քննադատական մտածողության դպրոց և զուգահեռաբար ուզում ենք [քննադատական մտածողության վերաբերյալ](#) էն բոլոր ելույթները՝ Jam Session-ները, որ մենք ունեցել ենք, դրանց հիման վրա երկրորդ կուրսը ստեղծել, ավելի խորացնել, «օնլայն» էսպես ասած՝ հեռակա կուրսի ձևով: Եվ դրա համար մեր մոտ մի քիչ թարմացան էն բոլոր թեմաները, որոնց մասին մենք խոսել ենք, և էդ թեմաներում իհարկե կան բացեր, կամ կա հավաքագրման կարիք: Եվ ես ուզում էի, չնայած հիմնական թեման, որի մասին ուզում եմ խոսել, դա արխայիկ մտածողությունն է, բայց մինչև էդ ես ուզում էի մի քիչ էդ հավաքագրման գործը անել:

Երբ մենք դիտում էինք էդ կուրսերը՝ հարց առաջացավ, թե կան թեմաներ, որոնք բուն քննադատական մտածողությանն են վերաբերվում և կան թեմաներ, ինչպես օրինակ [առաջնորդություն](#) կամ [ինովացիա](#), որ դրանք վերաբերվում են ավելի շուտ էն ասպարեզին, որը մենք անվանում ենք «քաղաքացիական հասարակության զարգացում» կամ «ՀԿ-ների աշխարհ» և այլն: Իսկ ինչպե՞ս են դրանք իրար հետ կապված. էդ կապը իհարկե նշվել է մեր Jam Session-ների ժամանակ, բայց բավական հպանցիկ է նշվել: Հիմա ես ուզում եմ իրան, էսպես ասած, ավելի հստակորեն վերհանել: Բանն այն է, որ քննադատական մտածողությունը որպես էդպիսին, եթե վերցնենք դա՝ այդ հմտությունը. «Լինել քննադատորեն մտածող կամ քննադատորեն մոտեցող էս կամ էն տեքստին, էս կամ էն երևույթին» - որպես այդպիսին ինքը իմաստ քիչ ունի, որովհետև դա մի հմտություն է: Իսկ էն մարդու, անձի ամբողջությունը, որը էդ հմտությունը ունի, մենք չենք քննարկել, եթե քննարկում ենք միայն քննադատական մտածողությունը: Ուրեմն, այ էդ մյուս մասը մեր խոսակցության՝ առաջնորդության հիմունքները¹ ասենք թե, կրեատիվության հիմունքները²,

¹ [Առաջնորդություն. Գևորգ Տեր-Գաբրիելյան \(Jam Session 6\)](#)

² [Ինովացիա և ստեղծագործական մտածողություն \(Jam Session 7\)](#)

ինովացիայի, - իրանք վերաբերում են էդ մյուս մասերին, որոնք լրացնում են, որպեսզի անձը, որը ունի քննադատական մտածողություն, իմանա նաև՝ էլ ուրիշ ի՞նչ ունենա, կոպիտ ասած, և դեպի ուր է դա տանում:

Հիմա, երբ ես մտածում էի, թե դեպի ուր է դա տանում. ես հասկացա նաև, որ դա տանում է դեպի շատ կարևոր մի հանգամանք, որը իմ անձնական դիտարկումն է, և ես չեմ կարող ասել, որ ես էքսպլիցիտ (որոշակի) կերպով երբևէ որևէ տեղից դրա հաստատումը ստացել եմ: Բայց իմպլիցիտ (ներունակ) կերպով ես ստացել եմ դրա հաստատումը, և դա քննարկվել է շատ վաղուց մի Jam Session-ում, որը Jam Session չէր. էն մեր առաջին փորձն էր, որ մենք արեցինք Միքայելի հետ, և դա ծիծաղի վերաբերյալ իմ ելույթն³ էր, որը եղել է դեռ էն ժամանակ, երբ մենք նախորդ օֆիսում էինք գտնվում: Ընդ որում՝ նույնիսկ ելույթը ես չեմ հիշում, բայց ... Դա չունի սղագրություն՝ դրա փոխարեն ես գրեցի էսսե⁴, սղագրության փոխարեն: Այ էդ էսսեի մեջ ես էդ խնդիրը շատ լավ, բավական խոր դիտարկել եմ, երբ խոսում եմ նրա մասին, որ եթե չլինի ծիծաղը՝ ժպիտը դժվար է բացատրել կամ անհնարին է բացատրել: Այսինքն՝ ծիծաղը կարելի է դիտարկել... Ժպիտը պետք է դիտարկել որպես բողբոջ, իսկ ծիծաղը՝ ծաղիկ: Այսինքն դա ի՞նչ է նշանակում. դա նշանակում է, որ մենք... Բողբոջի ու ծաղիկի նկարը էստեղ նկարենք ինչ-որ ձևի, չգիտեմ, ոնց կստացվի մոտա: Մա բողբոջն է և սա ծաղիկն է: Ուրեմն՝ մենք փաստորեն կարիք ունենք որոշակի մոտեցման. սա (բողբոջը) բացատրելու համար սրա (ծաղիկ) հեռանկարը ունենալ: Մա կոչվում է [տելեոլոգիա](#):

Մա կոչվում է տելեոլոգիա, որը նշանակում է նպատակաբանություն կամ... Հա՛ նպատակաբանություն, եթե բառացի թարգմանել: Եվ, երբ մենք խոսում ենք... այ, էն ամբողջ շարքը մեր ելույթների. ինչպե՞ս լավ պրոյեկտ անել, ինչպե՞ս պրոյեկտը նկարագրել, ինչպիսի՞ն է պրոյեկտի մտածողության հիմքը⁵: Երբ մենք էդ ամեն ինչի մասին խոսում ենք՝ (ընդգծվում է) էդ, որ ես ասել եմ էլի. որ մենք պիտի գտնվենք պրոյեկտային պարադիգմայի մեջ: Այ էդ պրոյեկտային պարադիգման և նպատակաբանությունը շատ հստակ աղերսներ ունեն և էդ, ի վերջո, էդ «նպատակ» բառով է, որ իրենք աղերսվում են, և վերջին նույնիսկ Jam Session-ը, որը դեռևս չի լույս ընծայվել, բայց արդեն պատրաստ է, որը [կրեատիվ խաղերին](#) էր նվիրված... Եթե հիշում եք՝ Դավիթ Չովհաննիսյանը էնտեղ նույնպես հենց առաջարկեց նպատակի մասին խոսել, և մի պահ ինքը ասաց շատ կարևոր ու հետաքրքիր բան, որ **առանց դրա (նպատակի) չկա ոչ մի բան**: Մա թեզ է, այ դա եմ ես ասում, որ իմպլիցիտ կերպով իմ ասածին արդեն ունեմ ես հավելյալ հաստատում, և մի շարք ուրիշ հանգամանքներ կան, որոնք դա հաստատում են: Որովհետև կա մեկ այլ թեզ, որը ասում է, որ շատ, շատ պրոցեսներ տեղի են ունենում ոչ նպատակային: Մինչդեռ իմ թեզը այն է, որ **ամեն ինչ, ինչ տեղի է ունենում, նպատակային է**: Եվ ես հաճախ եմ բերում էդ օրինակը՝ գրադարանավարուհու հին տարբերակը, կամ գրադարանավարի, բայց հիմնականում դա կանայք էին, որ նստած պապյանս էր անում, կոֆե էր խմում, հետո կոմպյուտերը եկավ՝ կոմպյուտերով է պապյանս անում ու սպասում է: Այ էդ ուրեմն մսխելը, վատնելը ժամանակի թվում է, թե աննպատակ է: Եվ նույն օրինակը բերում էի նաև կրթության՝ քսանմեկերորդ դարի կրթության հարցերի մասին խոսելիս, երբ երեք մասից բաղկացած մենք ելույթներ ունեցանք՝ Միքայելը, ես, հետո Նունեն Դիլանյանը, և ասում էի, որ երեխան դպրոցում էն հին ավանդական տարբերակով նստած լիքը ժամանակ է կորցնում: Ինքը

³ [Չրույց առաջին՝ Ծիծաղը, Մաս առաջին, Չրույց առաջին՝ Ծիծաղը, Մաս երկրորդ](#)
⁴ Մեծ ծիծաղից առաջ՝ <http://gtergab.com/hy/news/blog/before-the-big-laughter/72/>
⁵ [Ինչպե՞ս կառուցել պատմություն չԿ-ի գործունեության մասին. Մաս 1-ին \(Jam Session 13\),](#)
[Ինչպե՞ս կառուցել պատմություն չԿ-ի գործունեության մասին. Մաս 2-րդ \(Jam Session 14\)](#)

իհարկէ նպատակային հորձանուտի մեջ է, որովհետև դպրոցը նպատակային է, բայց ինքը իրան էդ վիճակում շատ հաճախ չի գգում, որովհետև ինքը կարծես պարզապես գոյություն ունենա:

Հիմա խնդիրն էն է, որ այ հենց էդ օրինակը ցույց է տալիս, որ աննպատակ իրադրություններ չեն լինում: Որ, երբ մարդուն թվում է, որ ինքը պարզապես գոյություն ունի՝ ինչ-որ բան է տեղի ունենում: Շատ կոպիտ ասած. երբ գրադարանավարուհին նստած կոմպյուտերով պայայան է բացում՝ ի՞նչ է տեղի ունենում. աշխարհը գնում է առաջ, Հայաստանը է՛լ ավելի հետամնաց է դառնում: Այսինքն՝ կա մի որոշակի նպատակային իրադրություն, որը անպայման տեղի է ունենալու, որովհետև աշխարհը գնում է առաջ, պարզապես տեղերն են, դիրքերն են փոխվում աշխարհի և Հայաստանի. է՛լ ավելի էտ է ընկնում: Եվ ցանկացած երկիր, որտեղ գրադարանավարուհին նստած պայայան է բացում: Ուրեմն՝ **նպատակային, տելեոլոգիական մոտեցում, պրոյեկտային պարադիգմ:** Եթե մենք չենք հասկանում, չենք ընդունում, որ մենք բոլորս գործում ենք պրոյեկտային պարադիգմում՝ մեզ ոչ մի բան պետք չի: Այ էդ թեզի ուժգնությունն է, որ հարցականացվող է, որովհետև դա նշանակում է դուրս գալ միջին մակարդակի տեսություններից, ինչի մասին մենք խոսել ենք դեռ գրեթե ամենասկզբում քննադատական մտածողության⁶ մասին խոսելիս: Ես օրինակներ բերեցի, եթե հիշում եք՝ [աղյուսակն](#) էլ կա, թե ժամանակակից գիտությունը՝ հասարակական գիտությունները, ինչպես են աշխարհում ձևակերպվում որպես միջին մակարդակի գիտություններ՝ ռեալիզմ, չգիտեմ, իդեալիզմ, որպես գաղափարական հոսանքներ, բայց նաև՝ գիտական մոտեցման սկզբունքները որոշող՝ գոբալիզմ, մարքսիզմ և այլն, - որոնք հարց չեն դնում (մարքսիզմը դնում է, բայց ոչ էն իմաստով, ինչ եթե նա մտնում է էդ միջին մակարդակի տեսությունների աղյուսակի մեջ), թե որո՞նք են հիմնասկզբունքները մարդկության գոյության: Հարցեր, որոնք դնում է կրոնը, որոնք դնում է փիլիսոփայությունը հին իմաստով, և այլն:

Հիմա, երբ ես ասում եմ, որ մենք բոլորս գտնվում ենք պրոյեկտային պարադիգմում, և երբ ասում եմ, որ աշխարհը պիտի բացատրվի տելեոլոգիական տեսակետից՝ ես փաստորեն ընկնում եմ վերին մակարդակի դիսկուրսի մեջ, որը վերջնական հարցերի վերաբերյալ պնդում է անում, որը, էսպես ասենք՝ ռացիոնալ գիտնականին հարիր չէ: Բայց ես ունեմ փաստարկներ, թե ինչու, և ես որոշ փաստարկներ արդեն բերեցի: Մա մեթոդական փաստարկն է: Եթե մենք չենք պատկերացնում, թե ինչպիսին պիտի լինի վերջնական արդյունքը, թեկուզ իդեալ... Ասենք պատկերացնել արդյունքը՝ դա չի նշանակում, որ նա է լինելու: Բայց դա հենց իդեալական ինչ-որ պատկերի մասին է: Երբ մենք խոսում ենք «vision»-ի (տեսլական) մասին. լինի դա [թումիզմ](#), լինի դա [կանտիանիզմ](#), լինի դա... Անպայման դա միշտ էդ, ուրեմն, խոսք, էդպիսի բան՝ պնդում, արվում է վերին տեսությունների մակարդակով, որոնք գիտական, համարվում է, որ գիտական, իսկ նաև նշանակում է, որ ըստ երևույթին ճանաչողական արժեք չունեն, որովհետև էստեղ շատ հաճախ կոնտր-արգումենտը այն է, որ դու ընկնում ես ձվի և հավի պատմության մեջ: Այսինքն՝ մեկը կասի. «Չէ, էդպես չի», դու կասես. «Էդպես է», և սկսվում է էդ, ուրեմն, բանը: Բայց մեթոդական տեսակետից, նույնիսկ եթե դա սահմանափակ պնդում որպես ընդունենք, շատ կարևոր է, և մենք, ի վերջո, հենց պրոյեկտային պարադիգմի մեր տեխնիկական մակարդակի մեջ աշխատում ենք էդ սկզբունքից ելնելով, որովհետև մենք անընդհատ խոսում ենք. «Սկզբից ունեցիր «vision», պատկեր, տեսլական, հետո դիր նպատակդ, հետո արդեն մտածիր, թե ինչպես դա իրագործել»: Ուրեմն՝ էդ մարդը, որը պիտի ունենա քննադատական մտածողություն, ինքը պիտի սկզբում ունենա տեսլականը: Ավելի շուտ՝ ո՛չ: Սկզբում ինքը, ինչպես մենք գիտենք, պիտի ունենա իր աշխարհի մասին իր պատկերացումները, որը նա

⁶ [Քննադատական մտածողություն. տեսություններ \(Jam Session 4\)](#)

ստացել է. սա, ասենք, թե էդ պատկերացումներն են: Հետո ինքը ունի որոշակի տեսլական: Թե ինչպես դա առաջացավ՝ ուրիշ հարց: Որից հետո նոր ինքը դնում է որոշակի նպատակ. էս տեսլականի մեջ սա, ուրեմն, նպատակը կլինի. և մտածում է՝ ինչպես բողբոջից հասնել էդ նպատակին: Հավի ու ձվի հարցը նույնպես շատ կարևոր է: Ուրեմն... Խնդրեմ, Միքայել:

13:18 **Միքայել Հովհաննիսյան (ՄՀ)** – Ուղղակի մինչև շարունակելը երկու ճշգրտող հարց ունեմ: Առաջին. էստեղ ինքը նպատակ է դնում, թե՞ ինդիք է ձևակերպում, որից դուրս է գալիս նպատակ:

13:34 **ԳՏԳ** – Հա, էդ էլ է հավի ու ձվի հարց, էս չեմ ուզում շատ խորանալ: Բայց պարզ է, որ... Իմ համար ի՞նչն է պարզ. պարզ է, որ եթե դու չունես տեսլականը՝ դու չես կարող ճիշտ կշռել, արժեքավորել էս կամ էն: Այսինքն՝ դու կարող էս կշռել ու արժեքավորել, բայց հենց հավի ու ձվի հարցը հենց էդ դեպքում է առաջանում: Հավի ու ձվի հարցը ինչո՞ւմն է. որ եթե դու... Օրինակ իմ շատ համակրելի մեր մասնակիցներից մեկի՝ Գևորգ Գալթակյանի թեզը: Նա ասում է. «Ազատություն չկա», և նա դա ասում է դետերմինացվածության իմաստով: Ես ասում եմ. էս մոտեցումը ցույց է տալիս, որ կա որոշակի ազատություն: Թե ինչքա՞ն, ո՞նց և այլն՝ էդ ուրիշ հարց է, բայց որ կա սկզբունքորեն, օնթոլոգիապես կա մի հատկանիշ, որը մարդը ունի, նպատակ դնելու, կամք օգտագործելու, ձգտելու դեպի էդ նպատակը, պարզապես, նույնիսկ իբր թե աննպատակ գործողություն կատարելու, կամային, էսպես ասած, գործողություն, կամ էն, որ «վոլյունտարիստական» – «arbitrary» (են անվանում), որը ուրիշ գրեթե ոչ մի... կարող է բարձրակարգ կենդանիներից ումանք նույնպես որոշակի չափով ունեն, բայց բնության մեջ մենք այլևս չգիտենք էլ ոչ մեկին (որ ունենա), և դա կապված է նրա հետ, որ մենք անվանում ենք գիտակցություն, homo sapiens, և այլն, և այլն:

Ուրեմն՝ ինչպե՞ս կարելի է մեկնաբանել այն թեզը, որ ազատություն չկա: Երկու իմաստով. մեկը դա իդեալիստական իմաստն է, այսինքն, որ մենք չենք որոշողը որևէ բանի: Բայց Գևորգը, ինչքան էս հիշում եմ, ոչ էդքան դա նկատի ունի, որը էդ դեպքում, էդ իդեալիզմի դեպքում կարող ենք էս սաղ չքննարկել: Իդեալիզմի դեպքում կարող ենք ոչ մի պրոյեկտ չանել, կարող ենք մեր հանապազօրյա հացի մասին չմտածել, կարող ենք չփորձել աշխարհը բարեփոխել և այլն: Շատ հեշտ է, որովհետև պատասխանատվությունը քեզանից դուրս է: Բայց էլի, մենք չենք կարող իրեն հաղթել, էդ իդեալիզմին, մենք պարզապես գործում ենք այնպես, կարծես... Եթե էդ է, ապա ոչինչ կարելի էր չանել, բայց քանի որ մենք ինչ-որ բան անում ենք, ուրեմն երևի էդ չի, կամ մենք լրիվ չենք ընդունում, որ էդ է:

Բայց Գևորգը նկատի ուներ դետերմինիզմի սկզբունքը: Հիմա. դետերմինիզմի սկզբունքը նշանակում է, որ, ասենք թե, եթե էս սա էստեղ էսպես գցեցի (գրիչը գետնին)՝ սա բավական հստակ պատճառահետևանքային կապերով՝ իմ էս արարքը, կապված է եղել որոշակի հանգամանքների հետ: Օրինակ, որ էս պիտի սկզբում ծնվեի, հասնեի մինչև էս պահը, որ սա գցեի, կամ, բացի դրանից, որ մինչև էդ պիտի իմ ծնողները ծնվեին, իրենք պիտի ինձ ծնեին, և այլն: Ուրիշ բան, ասում է դետերմինիզմի մոտեցումը, որ դու չես կարող էդ բոլոր օղակները հստակորեն որոշել, բայց դա չի նշանակում, որ դու ունես ազատություն: **Իսկ մեր մոտեցումը**, որը՝ դա, ի վերջո, էլի պրագմատիկի հետ էլ է կապված, ուտիլիտարի հետ էլ է կապված, - բայց, ի վերջո, էլի վերջին մակարդակի մոտեցում է, **ասում է, որ էն, ինչ որ դու չես կարող քո էսօրվա ռացիոնալիզմով ստուգել՝ պատճառահետևանքային կապերը, - կարող էս դրանց վերաբերյալ այլևս չմտածել:** Այդ դեպքում իմ այս արարքը կարելի է որոշակի պատճառներով բացատրել: Մեկը այն էր, որ իյուստրացիա անեի ազատության փոքրիկ դեպքի, մյուսը այն էր, որ կա գրավիտացիոն ուժ՝ էս գիտեի, որ սա կլինի (գրիչը

կընկնի): Եվ ի վերջո էն, որ ես ուզում էի իյուստրացիա անելի, դա իմ ազատ կամքի դրսևորումն էր: Իսկ եթե ոչ՝ մենք դրա մասին չգիտենք ու իմաստ չունի դա քննարկել:

Ուրեմն՝ պրակտիկ, պրագմատիկ կերպով լուծվում է այդ հավի ու ձվի հարցը, լուծվում է ազատության-վերսուս-դետերմինիզմի հարցը:

Ուրիշ օրինակ, շատ էլի հստակ. եթե ասենք իրոք ամեն ինչ դետերմինացված է՝ կարիք չկա, որ մենք փորձենք ինչ-որ բան դեպի լավը փոխել: Ուրեմն, երբ մենք ասում ենք, որ աշխարհում քչացել է բռնությունը... Օրինակ ես երեկ... Մենք Իզաբելլայի հետ ես վերջերս դա քննարկում էինք, ու ես երեկ ուշադրություն դարձրեցի, որ ֆեյսբուքով չստացա ոչ մի հաղորդագրություն երեկ տեղի ունեցած բռնության մասին: Առաջին օրը տեղի ունեցավ մեր Հայաստանում էդ բռնության դեպքը քաղաքապետարանում: Բայց երեկ՝ ես չստացա: Մինչ այդ ինքնաթիռ ընկավ, չնայած դա բռնություն պետք չի համարել: Առավոտը արթնացա, ես երեկ էի դա մտածում, ու տեսա, որ Ամերիկայում՝ դպրոցում էդ սպանությունն է տեղի ունեցել: Բայց մենք գիտենք, որ ընդհանուր առմամբ աշխարհով մեկ բռնությունը քչանում է: Հիմա, եթե մենք չենք հավատում, որ դա մարդու գործունեության շնորհիվ էր՝ մենք չենք կարող դրան ոչ օգնել, ոչ դրան խանգարել: Մենք ուրեմն չենք կարող աշխատել պրոգրեսի համար, կամ մենք աշխատում ենք պրոգրեսի համար մասնակի, փոքրիկ տեղանքում: Ռեալպոլիտիկի թեզը, որ ասում է. «Մի՛ խառնվի իմ գործերի մեջ»՝ մոտավորապես էդպիսին է: Ասում է. «Ես իմ ձևի կկառուցեմ»՝ էդ [ավտարկիայի](#) թեզը, ասում է. «Ես իմ ձևի կկառուցեմ իմ երկիրը. մատդ մեջը մի կոխիր»: Այսինքն՝ մենք բոլորս իբր թե երջանիկ կլինենք, որովհետև ոչ մի թագավոր անկեղծորեն չի ասում, բացի նացիզմի դեպքերից, ինչ-որ յուրահատուկ, - ոչ մի թագավոր անկեղծորեն չի ասում, որ ինքը հրեշ է, ու որ իր քաղաքացիներին, իր հպատակներին՝ էթե թագավորական լեզվով խոսենք, - վատն է դեպի տանելու: Ինքը բոլորին խոսք է տալիս լավը, բայց ասում է. «Մնացածների հետ գործ չունեք». էսպես էգոիստական, էսպիսի, ուրեմն, թեզ է դա:

Ուրեմն. կամ պիտի մենք էդ թեզը ընդունենք... իսկ դա չի ստացվում ընդունել, և ոչ տեխնոլոգիական պատճառով: Շատ հաճախ դրան ի պատասխան ասում են. «Այսօրվա կյանքում անհնարին է իրարից բաժանել», բայց դա ավելի տեխնոլոգիական պատասխան է: Իրականում էն պատճառով, որ **կա տելեոլոգիա, իմ կարծիքով, և որ աշխարհի մարդկության նպատակները բոլորը միավորվում են մի որոշակի տեսլականի մեջ՝ մեծ, որտեղ ամեն մեկը կարող է տարբեր նպատակներ ունենալ, կամ ամեն խումբը, բայց իրանք փոխըացնում են միմյանց: Եվ էդ տեսակետից հակամարդկային նպատակադրումները դուրս են մնում էս տեսլականից: Այսինքն՝ չկա էդ «Ին-Յան»-ի, չարի ու բարու հավասարության հարցը, այլ կա որոշակի տելեոլոգիա, որոշակի տեսլական, որոշակի մոտեցում, դեպի որը մարդկությունը գնում է: Կարող ենք մենք ասել... Ես դա անվանում եմ մեծ պրոյեկտ⁷: Կարող ենք մենք դա պնդել՝ հաշվի առնելով, որ հիվանդությունների քանակն է քչանում, որ սովի քանակն է քչանում, որ մարդկությունը ավելի լավ է սովորել տեսնել իր պրոբլեմները, ավելի լավ է հետազոտում իր պրոբլեմները, և այլն, և այլն, և այլն: Ու դա իհարկե միանշանակ ընթացք չի, ինքը ունի մեծ դժվարություններ: Բայց ինձ համար շատ կարևոր է էս տելեոլոգիական սկզբունքի՝ առաջ դնելը, որպեսզի մենք սրանից ելնելով հասկանանք, թե էլ ի՞նչ է պետք: Որովհետև, եթե մենք չունենք էս սկզբունքը՝ մենք չենք կարողանում հասկանալ, թե ինչի՞ է պետք քննադատական մտածողությունը: Ուրեմն սա էս մարդու, էս մարդուկի, էս անձի կարողությունն է ունենալ տեսլական, որին գումարվում է այն, որ նա կարող է ունենալ քննադատական մտածողություն, որին հակադրվում են...**

⁷ [Большой проект и его современный контекст: о законе, власти и архаическом сознании. Часть Первая](#)

(Հիմա վերջացնեմ թեզը): Որին հակադրվում են մի շարք մոտեցումներ, որոնք, շատ կոպիտ ասած, որոշները մենք քննարկել ենք, ինչպես օրինակ բանը՝ դավադրությունների մոտեցումը⁸. հակաքննադատական:

22:53 ՄՀ – Կարծրատիպային:

ԳՏԳ – Կարծրատիպային մտածողությունը և այլն, և այլն, և այլն: Եվ ի թիվս այլոց՝ արխայիկ մտածողությունը: Ես էս բառից հետո բան ունեմ ասելու, բայց, Միքայել, դու ուզում էիր ասելիր: Ասա՛ :

23:07 ՄՀ – Հա, չէ, ես ուզում էի ասել, որ, ըստ էության, էս նպատակների էքսպլիցիտ ձևակերպելու, ֆիքսելու, արձանագրելու ունակությունը, ըստ էության, կապված է քննադատական մտածողության հետ էն իմաստով, որ առանց քննադատական մտածողության այ էդ նպատակների ֆիքսումը, հստակ ձևակերպումը մարդու մտքում պրակտիկորեն անհնարին է. կարող է գտնվի պրոյեկտային պարադիգմի մեջ, բայց անգիտակցաբար:

23:38 **ԳՏԳ** – Հա: Մյուս կողմից ինքը կարող է, էս վիճակներում գտնվելով նույնպես (տեսլական փնտրելով)՝ նպատակներ ձևակերպել, որոնք շատ ավելի քիչ հասանելի են, կամ շատ ավելի քիչ «տեսլականանային»: Որովհետև տեսլականությունը նույնպես ունի մակարդակներ: Իմ ասած մարդկության նպատակը նույնպես ոչ մեկս չի տեսնի հասցված՝ ֆիզիկապես հաջողված, բայց կա տեսլական, որը է՛լ ավելի քննադատության չի դիմանում: Օրինակ՝ հենց ավտարկիայի տեսլականը. լինի դա Հյուսիսային Կորեա, լինի դա որոշ ձայներ Ռուսաստանում, և այլն:

Ուրեմն՝ տեսլականները նույնպես ունեն մակարդակներ, և, իհարկե, ճիշտ որոշելը, թե էս բողբոջից ի՞նչ ձևի ծաղիկ է ստեղծվելու, շատ կարևոր է: Էդ ճիշտ որոշելը նաև շատ դժվար է: Մարդը սոցիումից դուրս՝ ինքը անկարող է դա որոշել: Էդ ճիշտ որոշման օրինակներ են կրոնը, այսինքն օգնող օրինակներ՝ սոցիումի կողմից կազմավորված: Այլ սոցիումի արժեքային համակարգերը, բայց հիմնականում նրանք՝ որոնք դեպի ապագա են ուղղված: Կրոնի առումով, օրինակ, քրիստոնեության դեպքը եթե վերցնենք՝ ի՞նչն է ինձ համար էստեղ կարևոր, ի՞նչն է էստեղ ինձ համար... Ոչ թե ապոկալիպսիսը, ոչ թե հայտնությունը, այլ այն, որ մարդը կենդանու և աստծո միջև է դրվում: Այսինքն՝ ավելի ու ավելի գործելը, որպես շատ բան կարողացող, որոշակի սկզբունքների համապատասխանող անձ՝ դեպի «աստվածացման» ուղղություն, որը և արվեստում է արտահայտվում, և այլն, երբ նկարում է Մադոննային՝ իր սիրելի կնոջը. ա՛յ, դա էդ տեսլականն է, որը օգնում է աշխարհի զարգացմանը, որը էս տելեոլոգիային օգնում է:

Մյուս ակունքը, որը էս կարող էմ պատկերացնել, և իմ կյանքում մեծ դեր է կատարել, դա «sci-fi»-ն է՝ գիտաֆանտաստիկ գրականությունը, որը... Ինչու՞ ոչ «fantasy»-ն: Հասկանալի պատճառով. որովհետև «sci-fi»-ը ասում է ավելի ռացիոնալ, ավելի գիտական հիմունքների վրա. «մենք ունենք տեսլական, որ մեր քաղաքակրթությունը դառնալու է տիեզերական քաղաքակրթություն». դա է հիմնական պատմությունը ամբողջ «sci-fi»-ի: Եվ տեսեք՝ ինչ տեղի ունեցավ «sci-fi»-ի հետ: Ինքը այդքան մոդայիկ էր մինչև... էդ ամբողջ, փաստորեն, քսաներորդ դարում ծաղկեց և վաթսունականներին հսկայական հաջողությունների հասավ՝ յոթանասունականներին, և հետո կանգ առավ: Դարձավ միայն ժանրերից մեկը. «fantasy»-ն եկավ և կողքից ահագնանալով «sci-fi»-ին շատ փոքր տեղ հատկացրեց, որովհետև մարդկության մեջ եղավ հիասթափություն երկաթյա

⁸ [Դավադրության տեսություն. Մաս 1 \(Jam Session 21\)](#),
[Դավադրության տեսություն. Մաս 2 \(Jam Session 23\)](#)

տեխնոլոգիաներից: Եվ տեսե՞ք՝ ինչ հետաքրքիր զուգադիպություն է. այդ հիասթափությունը գաղափարական մակարդակով համապատասխանեց տեխնոլոգիական խնդրառմանը, որի օրինակն էր տիեզերքի, տիեզերք դուրս գալը սահմանափակելը: Յոթանասունհինգ թվին [Союз Апполон](#)-ից հետո, «*détente*»-ի պատճառով նաև ԽՍՀՄ-Ամերիկա հարաբերությունների մեջ, երբ արդեն, նաև՝ Բելլայի սիրած Հելսինկիի պատճառով և շնորհիվ, [Հելսինկյան ակտի](#), այո՛, էդքան փող ծախսելը, ռազմական նպատակներով կոսմոսը՝ տիեզերքը զարգացնելը՝ դրա կարիքը սկսեց փոքրանալ: Եթե հիշում եք արդեն ութսունականներին, երբ հայտարարվեց, որ ԽՍՀՄ-ը [չարի կայսրություն](#) է ամերիկյան պրեզիդենտի կողմից, նա փորձում էր [աստղային պատերազմներ](#) զարգացնել, տեխնոլոգիական նոր մակարդակի հանել, բայց չէ, իմաստ չունեցավ դա: Ո՞նց էր անումը էդ մեր սիրելի պրեզիդենտի: Ով ավարտեց պատերազմը, բանը, սառը պատերազմը, կինոդերասանը:

ՄՀ – Ռեյգանը:

- Ռեյգանը: Ռոնալդ Ռեյգանը ասաց՝ բան:

28:21 **ՄՀ** – «Империя зла»:

ԳՏԳ – «Империя зла», այո, չարի կայսրություն: Ռոնալդ Ռեյգանը հայտարարեց աստղային պատերազմների թեզը: Բայց հետո դրա կարիքը չեղավ: Եվ այնքան թանկ արժեք լուսին գնալը, այնքան թանկ արժեք այդ ամենը... նաև տնտեսական փոփոխություններ տեղի ունեցան աշխարհով մեկ... Հենց Ամերիկայում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եղած ֆինանսական «boom»-ը սկսեց յոթանասունականների արդեն ճգնաժամով, և՛ հաջորդ փուլերի, - մարդիկ սկսեցին ավելի, մի քիչ շատ, փողը հաշվել... և դրա պատճառով կանգ առավ այդ երկաթի միջոցով տիեզերքը գրավելու, տիեզերք գնալու պատմությունը: Եվ դա զուգահեռաբար անդրադարձավ «sci-fi»-ի դերի՝ աշխարհի մտածողության մեջ փոքրացմանը: Զուգահեռ տեղի ունեցան էդ երկու պրոցեսները:

Եվ ինչի՞ է սա էսքան ակտուալ, որ ես հիմա էս պատմությունը պատմում եմ. որովհետև, եթե նայենք մենք մեր ֆեյսբուքին, իմ, ուրեմն, ֆեյսբուքին, որը ունի, պարզ է, հայաստանյան ներկայացուցիչներ կան իմ ֆրենդների մեջ, ռուսաստանյան, և ընդհանրապես նախկին ԽՍՀՄ-ից, ինչպես նաև անամերիկյան, անգլիացիներ, եվրոպացիներ և այլն: Եվ նրանք բոլորը ասում էին. «Տեսա՞ք ինչ արեց [Իլոն Մասկը](#) ի տարբերություն մեր երկրի»: Ամերիկացիները դա ասում էին իրենց ճգնաժամային պրոբլեմների պատճառով, Թրամփի պատճառով, անգլիացիները՝ Բրեքզիտի պատճառով, Ռուսաստանը՝ ընդհանրապես ռուսները, ռուսաստանցիները՝ Ռուսաստանի ճգնաժամի պատճառով, հայաստանցիները՝ մեր ճգնաժամի... Ուրեմն՝ բոլորը ասում էին. «Տեսե՞ք ի՞նչ արեց Իլոն Մասկը»:

Ուրեմն էդ «sci-fi»-ական երազանքը. դրան հետ դառնալ, դա վերականգնել՝ կա բավական խոշոր հանրային կարիք ու ցանկություն: Ու երևի թե դա վերադառնում է որպես նաև իրագործվող բողբոջ, որը դեպի որոշակի ծաղիկ է տանում, որովհետև տեղի ունեցավ, տեղի ունեցավ՝ տեղը նստեց: Այսինքն՝ երկաթի միջոցով՝ արդեն պարզ էր դառնում, որ շատ առաջ գնալ չի կարելի, բայց՝ տեխնոլոգիաների զարգացումը էն ամեն ինչի, ինչը որ միավորվում է արհեստական ինտելեկտ հասկացության մեջ, դրա զարգացումը՝ կոմպյուտերներ, օնլայն, ինտերնետ, և այլն, և այլն: Եվ նաև այլ հարցերի. ասենք՝ գերթեթև նյութերի արդյունաբերության զարգացումը և այլն, - (այդ ամենը) թույլ տվեցին, որպեսզի նոր փորձեր արվեն այդ ուղղությամբ: **Ուրեմն՝ այդ պատմությունը, որ տեսլականի**

կարիք ունի մարդկությունը, ինքը շատ կարևոր է: Դա ես մեծ մաշտաբով եմ ասում. ամեն մասշտաբի մեջ եթե դու տեսլական չունես՝ դու չես կարողանում ունենալ կամ հասկանալ՝ ինչի՞ դ է պետք, որոշել՝ ի՞նչն է աուտ, ի՞նչն է ճիշտ: Թացը չորից ջուկել: Ի՞նչ կարիք կա, եթե դու չունես տեսլական: Ուրեմն՝ դու պիտի ունենաս տեսլական, և պիտի ռեֆլեքսիվ կերպով դրան վերաբերես, մտածելով, թե քո էդ ոչ շատ պատկերացնելի ապագա տեսլականի մեջ առանձին ծաղիկները որո՞նք են, քիչ թե շատ հասանելի նպատակները որո՞նք են, և դրանցից ո՞րը ընտրեմ ես դրան հասնելու համար: Եվ էդ պրոցեսի մեջ է, որ մեզ պետք է և՛ քննադատական մտածողությունը, և՛ դրան հակադիր մոտեցումները հասկանալը ու դրանց հետ կռիվ տալը: Որովհետև այլապես ինչի՞ պիտի դու կռիվ տաս: Կասես. «Ինքը իրա կարծիքն ունի, ես իմ կարծիքն ունեմ»: Բայց էստեղ կա կռվի հանգամանք, կռվի հարց: Մենք անընդհատ էդ կռվի մեջ ենք, մենք անընդհատ արժեքների բախման մեջ ենք, ասում ենք. «Չէ, դա սխալ է, իսկ սա ճիշտ է»: Ասա Ջուլիա ջան:

32:34 **Ջուլիա Սահակյան (ՋՍ)** – Հա: Ես մի հատ հարց ունեմ կապված տեսլականի և նպատակի հետ: Կա... Դուք նշեցիք, որ կան տարբեր մակարդակներ տեսլականի: Իսկ լինո՞ւմ է, երբ տեսլականն ու նպատակը նույն մակարդակի վրա են: Այսինքն՝ տեսլականն ու նպատակը նույնն են, ու դա նաև ինչ-որ կերպով խոչնդոտում է ավելի մեծ տեսլականի... Որովհետև, երբ որ դու քո նպատակին հասնում ես, դա քեզ թվում է՝ քո տեսլականն է, - (և դա) խոչնդոտում է ավելի մեծ տեսլականի ձևավորմանը:

33:01 **ԳՏԳ** – Իհարկե նրանք բոլորը, էդ երկու հասկացությունների դաշտերի հարաբերակցության բոլոր տարբերակները հնարավոր են, որովհետև դա մենք հիմա արստրակտ մակարդակի ենք վերլուծում: Բայց կոնկրետ կյանքից ելնելով՝ այո, շատ հաճախ ասում են. «Երբ մարդը հասավ իր ինչ-որ նպատակին՝ կորցրեց կյանքում ապրելու կայֆը, ուժը»: Հենց վերջերս ես կարդում էի. Ինչու՞ է տարեց մարդուն թվում, որ ժամանակն ավելի արագ է անցնում, քան երիտասարդին: Գիտնականները վերջապես դա հետազոտեցին, և ունեն շատ հստակ բացատրություն. որովհետև հիշողությունը մարդու հիմնված է եղած նորը արձանագրելու վրա, որովհետև հինը դու առանց էդ էլ հիշել ես: Իսկ նորը ի՞նչ է. դա նոր տպավորությունն է: Իսկ երիտասարդ ժամանակ դու ավելի շատ նոր տպավորություններ ես ստանում, քան տարեց ժամանակ, որովհետև (տարեց ժամանակ) ավելի հակված ես նույնատիպ պրոցեսների մեջ ընկղմվելու, հետևելու քո սեփական արդեն ձևավորված սովորություններին, և այլն, և այլն: Դրա համար էն երիտասարդ ժամանակվա կուտակված նոր տպավորությունները, թվում է, թե ավելի շատ են, քան տարեց ժամանակ, մի քանի տարվա ընթացքում կուտակված ավելի քիչ նոր տպավորությունները: Այսինքն՝ երիտասարդ մնալու ձևն է՝ նոր տպավորություններ ստանալ: Այդ դեպքում ժամանակի զգացումը անցած տարիների՝ մոտակայում անցած տարիների և նախկինում անցած տարիների, ավելի բալանսավորված է: Բայց հենց, եթե բալանսավորված չի՝ դու փաստորեն ինչ-որ իմաստով տեսլականդ գուցե կորցրել ես, նպատակդ որովհետև իրագործվել է՝ նորը չունես. էնպես որ դա իհարկե հնարավոր է:

Էս շատ կարելի է քննարկել, ու մենք շատ լավ ենք դա քննարկում կոնկրետ իրադրությունների մեջ, և պրոյեկտի, կոպիտ ասած, տրամաբանական աղյուսակն ենք ստեղծում: Ամեն անգամ, երբ մենք ստեղծում ենք պրոյեկտ, այ դա այ էս պրոյեկտային պարադիգմի կարևոր հանգամանքներից. մեկը՝ դա տելեոլոգիան, մեկը՝ դա, որ մենք պարզապես չենք մսխում մեր կյանքի ցանկացած պահը, այլ ամեն պահը արժեքավոր է և իմաստավոր պիտի լինի: Էդպիսի կան մի քանի սկզբունքներ:

Մյուս սկզբունքը, օրինակ, շատ հետաքրքիր. որ տելեոլոգիան նաև ինչ-որ իմաստով նշանակում է պատճառահետևանքային կապի բան՝ շուտովածություն. հետևանքն է դետերմինացնում պատճառը: Դու ունես տեսլական, որի հիման վրա ստեղծում ես նպատակ, որին ձգտելու համար սկսում ես

որոշակի գործողություններ կատարել: Մա շատ հետաքրքիր հանգամանք է: Մա շուտ է տալիս ամբողջ համաշխարհային մոտեցումների մի շատ խոշոր մասը՝ ավանդական, գիտական և փիլիսոփայական մոտեցումը:

Այ եղպիսի կարևոր հարցեր կան էստեղ՝ տելեոլոգիական մոտեցման մեջ. և էլի եմ ասում. ուրեմն, եթե դու չունես էս տելեոլոգիական մոտեցումը՝ դու, քո քննադատական մտածողությունը դառնում է բան՝ *заземлённости* – գետնահար է դառնում: Դու չգիտես, նույնիսկ կարող է դու դա ունենա՝ օգտագործում էս, բայց չգիտես՝ ինչի՞ համար էս օգտագործում: Եվ էստեղ շատ հեշտ է դրա «Ֆարշը» ստեղծել:

Այ էդ, որ Բելլան ասում է՝ «Paradiplomacy», և այլն, և այլն. էդ «para-»-ն ի՞նչ է նշանակում: Էդ «para-»-ն նշանակում է «այլընտրանքային»: Իսկ ի՞նչ է նշանակում «այլընտրանքային». տվյալ կոնտեքստում դա նշանակում է չունենալ մեծ տեսլականը՝ ունենալ փոքր, որը եթե նպատակիդ հասար՝ տեսլականդ էլ է վերջանում. էդ փողը Շվեյցարիայում, զավոդը, չգիտեմ, Ռոդեզիայում, և այլն: Եվ էդ տեսակետից՝ կովել նրանց հետ, ովքեր ունեն տեսլական՝ հայտարարելով, որ նրանք էլ չունեն: Այ էդ նույն ավտարկիայի բանն է: Գիտականորեն ինքը չի հիմնվում: Դրա համար ամեն անգամ, երբ ասում են. «Դու ունես քո կարծիքը, իսկ էս իմ»՝ մենք պիտի մտածենք: Հենց էդ... «կարծիքը» «կարծրատիպի» հետ առնչվում է, մի քանի անգամ ասել եմ... Մենք պիտի մտածենք. էդ մարդը դա անկեղծ է ասում, թե՛ ինքը ուզում է ասել «քո կարծիքը նույնքան տշելու բան է, ինչքան էլ իմը, որովհետև էս ունեմ իմ կարծիքը, բայց իմ կարծիքը էս (պուճուրիկ) տեսլականից է գալիս»: Իմ կարծիքը ամեն քայլափոխին. և դա որոշում է յուրաքանչյուր մոտեցում, նաև՝ քննադատական մտածողության, որովհետև եթե դու վերլուծում էս Հայաստանի, թե Ռուսաստանի, թե Ամերիկայի դաշտը քաղաքական... Այ, ինչպես մենք Իզաբելլայի հետ հաճախ անում ենք. աջեր և ձախեր, լիբերալիզմ և, ասենք, պահպանողականություն՝ կամ այլ... Եթե դու վերլուծում էս, դրանց տեղադրելով նույն հարթության մեջ՝ դու խաղում էս «Paradiplomacy»-ի խաղը: Եթե դու կարծում էս, որ գոյություն ունի «օբյեկտիվ ճշմարտություն»՝ դու խաղում էս «Paradiplomacy»-ի խաղը, որի տեսակետից դուք հավասարազոր եք, էդ «ճշմարտությունը» հայտնի չի, և այլն:

Դու ունես տելեոլոգիական մոտեցում:

Էս տեսակետից Խորհրդային Միության գաղափարախոսությունը շատ ուժեղ էր, որովհետև ինքը հենց, ինքը մեղադրվում էր նրա մեջ, որ ինքը ունի տելեոլոգիական մոտեցում՝ ուրեմն արժեքային է, ուրեմն օբյեկտիվիզմը խախտում է: Բայց քանի որ ինքը մեթոդաբանապես ճիշտ սկզբունքից է ելնում... և հենց գուցե դա է պատճառը, որ մտագործունեության մեթոդաբանությունը տենց լավ ձևավորվեց հենց էդ գաղափարախոսության մեջ: Ինքը մեթոդաբանապես ելնում էր ճիշտ դրույթից, որ հնարավոր չի չունենալ տելեոլոգիական մոտեցում: Նույն... Այսինքն, կոպիտ ասած՝ «*добро должно быть с кулаками*»: Կոպիտ ասած՝ ամեն ճշմարտություն հնչելիս ինչ-որ մեկի տելեոլոգիայից է գալիս: Եթե դու լիբերալ ճշմարտություն էս ասում՝ դա գալիս է քո այս տելեոլոգիայից: Եթե ինչ-որ մեկը ասում է ճշմարտություն, որին դու չես կարող համաձայնել՝ նրա տելեոլոգիան ուրեմն լավը չէ՝ վատն է, էն նույնը չէ, ինչ որ քոնը, որը քիչ թե շատ աշխարհի սկզբունքների վրա է հիմնված: Դրա համար հենց «մարդու իրավունքներ» հասկացությունը ի վերջո չի մնում տեղայնացված գուտ միայն Արևմուտքին, Եվրոպային վերաբերող, իրենց մշակութային ծնունդ, այլ համաշխարհային նշանակություն ունի, որովհետև, այ, դա էլ է ձև՝ փոքրացնել, ցածրացնել:

⁹ Ազատության գրույցներ. Գաղափարներ և գաղափարախոսություններ (Jam Session 26)

Այ, մենք քննադատական մտածողության մասին որ խոսում էինք՝ ես էլի հպանցիկ ասացի այդ մասին. որ **ցանկացած թեզ, երբ որ դու վերցնում ես՝ դու կարող ես դատել. այդ մարդը՝ թեզը արտասանող, դեպի մեծ տեղեւորգիա է իր վերլուծությունը անում՝ թե սպանում է մարդկության զարգացումը**: Շատ պարզ օրինակներ: Օրինակ, եթե մեկը ասում է. «Դե ի՞նչ կարելի է ուզել մեր Հայաստանից: Սա տիպական հետխորհրդային երկիր է, և մեր հետխորհրդային երկրները շատ սկսել են նմանվել Աֆրիկայի: Վերցրեք Աֆրիկայի պատմությունը դեկոլոնիզացիայից հետո, կամ վերցրեք Լատինական Ամերիկայի պատմությունը»: Ահա ձեզ մի թեզ, որը, թվում է թե, շատ գիտական համեմատություն է անում, բայց ինքը իրականում ցածրացնում է, դեպի կյանքի անհիմաստությունն է մղում, որովհետև ինքը ասում է, որ. «Գիտե՞ք ինչ, ոչինչ հնարավոր չէ անել: Սա օբյեկտիվ պրոցես է և դու պիտի եղ փուլերով անցնես, ու անցնելուց հետո էլ մնաս էն վիճակում, ինչ վիճակում որ հիմա Լատինական Ամերիկան ու Աֆրիկան են»: Այսինքն՝ **հեռանկար չկա, այսինքն՝ աշխարհը չի փոխվում՝ աշխարհը ցկկլիկ է կամ միշտ նույնը, այսինքն՝ արխայիկ մտածողություն**: Այ էդ արխայիկ մտածողությունը դրա հիմքում է: Այդ թեզը կարող է ասվել սպեկուլյատիվ նպատակներով, կարող է անկեղծորեն ասվել: Կասկ չունի. դրա մեջ կա աշխարհի անփոփոխության ու քո անզորության, քո ազատության բացակայության շատ հստակ կոմպոնենտ:

Ուրեմն՝ **ամեն տեքստ նայելիս, ամեն պնդում դիտարկելիս դու կարող ես տեսնել. նա դեպի տեղեւորգիա՞ է գնում, թե՞ ոչ, և եթե այո, ապա քո՞ տեղեւորգիան է, թե՞ հակառակ տեղեւորգիան**:

Այ էդպես մենք գալիս ենք կարևորությանը. **հասկանալ հիմքում գտնվող արխայիկ պատկերացումների օգտագործումը**: Որովհետև երբ մենք նայում ենք քննադատական մտածողությունը, մեր նախորդ ելույթներում, շատ մանրամասն... Ասենք՝ հենց էդ վիքիպեդիայի էդ բոլոր [տրամաբանությունների խախտումները](#), և այլն, և այլն... Մենք մի քիչ, իհարկե, [դավադրության տեսության](#) մասին խոսելիս խոսեցինք, բայց մենք էդտեղ չէինք լրջորեն առանձնացնում, դա որպես հոետորաբանական հնարքներ էինք դիտարկում... Լրջորեն չէինք առանձնացնում այն արժեքային դրույթները, որոնք հիմքում են գտնվում: Այ, **երբ ես ասում եմ արխայիկ մտածողություն՝ դա էդ արժեքային դրույթների արդեն, հիմնադրույթների վերաբերյալ եմ ես սկսում մտածել**:

Եթե հիշում եք, դավադրության տեսության մասին որ խոսում էինք, որոշները ես արդեն նշեցի: Օրինակ այն, որ, ըստ այդ [տեսության, աշխարհը հերարխիկ է](#), որոշումներ ընդունվում են գաղտնի՝ գազաթի կողմից, և իրագործվում են անխաթար կերպով՝ նույնությամբ, ինչպես որ ընդունվել են: Այդ ենթականխադրույթները բավական տիպական են արխայիկ մտածողության համար: Այսինքն՝ մարդը էնքան չի հասկանում, որ... Ու դա շատ խոր տեղեր է գնում: Էնքան չի հասկանում, որ, ասենք թե, եթե ես ասացի հիմա. «Իզաբելլա, գնա ինձ մի բաժակ ջուր բեր», և նա դա կատարեց՝ իմ ասածը հավասար չի լինելու այդ իրադարձությանը, որ սրանք որակապես տարբեր բաներ են, որ կարող էր դա տեղի չունենալ: Էն բաժակը, որ ես էի պատկերացնում, գուցե նույնը չի, որը եկավ, և այլն, և այլն: Իմ պատկերացրածով դա պիտի սառը լիներ, նա գուցե սառը չի, այլ... Իզաբելլայի մասին չի իհարկե, խոսքը, և իմ մասին չի, բայց եթե հիշում եք էդ պատմությունը, որ կար նախարարի մի օգնական Խորհրդային Միության ժամանակ, ինձ ծնողներս են պատմել, որը ատելով ասում էր իր նախարարին: Եվ երբ նախարարը նրան ուղարկում էր ջուր բերելու՝ նա գնում էր (էն ժամանակ նախարարություններում ուրիշ տեղ չկար ջուր հավաքելու) էդ տղաների գուգարանը, ծորակը բացում էր, ջուրը սառացնում, լցնում, հետո մեջը թքում էր բաժակի, հետո գդալով լա՛վ ֆոցնում էր, հետո նոր տալիս, բերում, տալիս էր իր նախարարին: Ուրեմն՝ այ դա տիպական օրինակն է, թե ինչու՞

չի կարելի պատկերացնել, որ ավտոմատ կերպով է տեղի ունենում սա: Եվ մենք դա քննարկեցինք բավական խորապես և՛ դավադրության տեսության ժամանակ, և՛ այլ դեպքերում, երբ հերարխիկի վերսուս ոչ հերարխիկի խնդիրներն էինք քննարկում: Էս պահին կանգ առնեմ, եթե ինչ-որ լրացում, կարծիք, բան ունեք ասելու, և շարունակենք արխայիկ մտածողությունը:

45:17 **ՄԶ** – Ես մի բան ունեմ ասելու: Էս տեսանկյունից, մանավանդ ձեր վերջին ասածները հաշվի առնելով, փաստորեն ստացվում է, որ քննադատական մտածողությունը որպես բլոկ ինքը ոչ թե գումարվում է այ էդ տելեոլոգիական համակարգին, այլ ինքը գտնվում է դրա մեջ, որովհետև ինքը էս պարագայում կամ ինչ-որ փուլից սկսած՝ միջոցից, գործիքից, մեթոդից վերածվում է նպատակի: Որովհետև եթե դու նաև ձևակերպում ես քո տեսլականում պրոյեկտային պարադիգմը որպես կարևոր նպատակային բաղադրիչ՝ քննադատական մտածողությունը նույնպես հանդիսանում է քո տեսլականի մի մաս: Որովհետև դա շարունակաբար զարգացվող հմտություն է, գործիք է, գիտակցության ձև է և այլն: Այսինքն՝ էդ հարաբերությունը իմ կարծիքով բավականին բարդ ու բազմակոմպոնենտ է: Ինքը մեկ-մեկ իրար կպնտում են որպես գործիք և բովանդակություն, մեկ-մեկ՝ մեկը մյուսի մեջ մտնում է որպես պարունակություն, որպես բովանդակություն:

46:30 **ԳՏԳ** – Ինչպես և նախորդ դեպքում, ասենք՝ տեսլականի ու նպատակի մասին, կարելի է բոլոր, էսպես ասած, հարաբերությունները դիտարկել դրանց, դրանք շատ են: Երբ մենք առանձնացնում ենք իրարից՝ սրանք ինչ-որ դոմեններ են: Էդ դոմենը, այ, ինչո՞ւ ենք մենք նկարում: Մա արդեն մտագծումնության այբուբենի հետ կապված հարց է: Որովհետև մեզ ավելի հեշտ է դոմենները նշել, քան այլապես: Եթե նկարի կարիքը գալիս է... այսինքն՝ դու կարող էիր հիմա վեր կենայիր և սա սրա հետ, ասենք, ինչ որ կերպ ավելի միավորերիր: Սրանք դոմեններ են: Ոչ մի բանը ոչ մի բանից առանձին չի: Եվ դա էլ էս տեսլականի կարևոր դրույթներից մեկն է, որովհետև դրա հակառակը հենց քննադ... Բանի՝ արխայիկ մտածողության կարևոր թեզերից մեկն է, որը... Հենց էս վերջերս [հոդվածը](#), որ էս տեսա, դրեցի ֆեյսբուքում՝ Լոթմանի և Ուսպենսկու՝ միֆոլոգիական մտածողության մասին էր, որը առնչություններ ունի արխայիկ մտածողությանը: **Միֆոլոգիական մտածողության մեջ, ինչպես և արխայիկ մտածողության մեջ, կան իրեր և մեջտեղները՝ դատարկություն: Այ էդ՝ «ամեն ինչ ամեն ինչի հետ կապված է», դա և՛ քրիստոնեական թեզ է, և՛ գեղագիտական թեզ է, և՛ մարդկության, էսպես ասած, փիլիսոփայության՝ էս տեսլականի թեզերից է:** Այսինքն՝ առանց դրա խիղճը՝ օրինակ, անհնարին է: Բայց նաև՝ ֆիզիկան, եթե հիմա հետազոտում ես. էդ ֆիզիկոսները դրա վրա են մանթրաշ ընկնում, որ կար չորս տեսություն՝ փոքր ուժերի, մեծ ուժերի, գրավիտացիոն և էլեկտրոմագնիսական: Եվ մի գիժ ֆիզիկոս՝ Իզաբելլայի սիրելիներից, հավատացյալ, ասաց, որ դրանք օրենքով պիտի իրար միավորվեն, և պարզվեց, որ իրոք միավորվում են: Մնաց հը, հը՝ գրավիտացիոնը միավորեն. էդտեղ մի քանի թեզ է մնացել մինչև... Բայց էլեկտրոմագնիսականը, թույլն ու ուժեղը՝ լրիվ միավորվեցին, էլեկտրոմագնիսականը լրիվ միավորվեց, մնաց գրավիտացիոնի հարցը լուծել, որը շատ հետաքրքիր հարց է: Այսինքն՝ էն, որ ամեն ինչ իրար փոխկապակցված է, մենք չգիտենք՝ ֆիզիկայում էդպես է, թե չէ: Դրան հակադիր թեզեր էլ կան, որովհետև շատ հետաքրքիր է... չխորանանք դրա մեջ: Պարզվում է, որ դատարկությունը մեր դիտարկման դեպքում շատ ավելի շատ է, քան նյութը: Կոպիտ ասած՝ աշխարհում կա իննսունհինգ տոկոս դատարկություն, հինգ տոկոս նյութ: Բայց, մյուս կողմից, պարզվում է, որ էդ երկուսից էլ շատ ավելի շատ կա էն, ինչ որ հիմա կոչվում է «մութ մասսա», որ չգիտենք՝ դա ինչ է: Այսինքն՝ մենք չգիտենք, ի վերջո, վերջնական տեսլականի մեջ դա ինչպես է, բայց **«ամեն ինչ ամեն ինչին փոխկապակցված է» դրույթը, համակարգման կարողությունը հսկայական ուժ է մարդկությանը իր ճանաչողությունը զարգացնելու համար և իր տեսլականը կառուցելու համար:** Իհարկե չմոռանալով տարբերակելը, որովհետև էդ ուժը, էդ թեզը՝ մենք դրա մասին խոսել ենք՝ «ամեն

ինչ ամեն ինչի հետ կապված է», - հիմնված է մարդու տարբերակման ունակության վրա. մեկը՝ մի բանից՝ մյուսը տարբերակելու: Այսինքն՝ «ամեն ինչ ամեն ինչի հետ կապված է» և՛ «տարբեր» բաների (թեզերի) միջև: Դա չի նշանակում, որ ամեն ինչ նույնն է, ինչ որ մյուս բանը: Այ էդ շատ կարևոր է տարբերակել:

50:11 **ՄԶ** – Ես մի ուրիշ բան էլ էի ուզում ասել կապված այդ երկու համակարգերին, որ փաստորեն մեր խոսակցության մեջ իրար հակադրվում են՝ արխայիկ պլյուս այ էդ դիցաբանականը, երևի, ու, այ, էս քննադատական մտածողությունն ու նպատակաբանական ընկալումը: Ես մի քիչ ուրիշ ձևի փորձեցի պատկերացնել, ու ոնց որ ստացվում է, նաև, էդ ամեն ինչին կպցնելով էս օնթոլոգիական պատկերացումը ու դրա թարմացման՝ պարբերական թարմացման անհրաժեշտությունը... Որովհետև իմ մոտ տպավորություն ստեղծվեց, որ դրանք ոչ թե հակադրվում են, չնայած ինչ-որ սիտուցիայում, եթե երկու տարբեր սուբյեկտի պարագայում էս դիտարկում՝ հակադրում են, բայց իրանք նաև իրար հաջորդելու տրամաբանություն ունեն: Այսինքն՝ **էն ժամանակ, երբ որ քո աշխարհի նկարագրությունը դադարում է էնքան համապատասխանել իրական աշխարհի պատկերին, որ դու աղեկվաստությունը կորցնում էս ու դրա համար սկսում էս ընկնել կարծրատիպային մտածողության, արխայիկ մտածողության մեջ՝ քո մոտ այ էդ նպատակաբանականը փոխարինվում է արխայիկով: Եթե դու ռեֆլեկտիվ էակ էս՝ դու զգում էս անհրաժեշտություն վերանկարագրելու աշխարհը, ինչը քեզ հնարավորություն է տալիս վերադառնալ նպատակաբանականին: Ու էստեղ մենք տեսնում ենք, որ նաև որոշակի իրար հաջորդելու տրամաբանությունն է աշխատում, այլ ոչ միայն նույն ժամանակում իրար հակադրվող:**

51:40 **ԳՏԳ** – Այո, իհարկե: Եվ, էսպես ասած, էդ գալիս է էդ Կանտի «Ազնվության թեզին» մոտավորապես: Էն ձևի, որ ասում էր, որ եթե... Ու շատ մազալու մեր Հայաստանում է դա կրկնվում, և էստեղ էդպես չի: Որ ասում էր. «Եթե դու անագնիվ էս՝ քո խանութ չեն գնա, կգնան կողքինիդ խանութը»: Դրա համար դու անընդհատ քեզ ագնիվ էս պահում, կամ, ուրիշ լեզվով ասած, ասում է. «Եթե դու գրավիտացիոն կամ ինչ-որ բնության օրենքի դեմ դուրս եկար ոչ ճիշտ ձևով, ոչ տեխնիկապես ճիշտ ձևով՝ ասում է. հետույքիդ քացով կտան՝ դուրս կլթոնես: Չես դիմանա համակարգի մեջ, եթե աշխարհընկալումդ չի համապատասխանում իրականությանը»:

Բայց մենք տեսնում ենք, որ ժամանակավորապես առանձին տարածքներում... և էդ տեսակետից աշխարհի բանը հեշտ է, որովհետև աշխարհը, թու, թու, թու քիչ, թե շատ լավ է զարգանում, նորմալ, առանձին անհատը՝ նույնպես: Այ էդ մեջտեղի օղակներն են, որ ճգնաժամի մեջ են. ազգ, պետություն, երկիր, տարածք, հող, և այլն, և այլն: Եվ... Խնդրեմ:

52:58 **Իզաբելլա Սարգսյան (ԻՍ)** – Ես... Չգիտեմ, դա միգուցե այլ խոսակցություն բացի, բայց էս երկու ինձ համար վիճելի միգուցե թեզ... Կամ միգուցե վիճելի չի՝ կարող ենք քննարկել: Մեկը, որ ասում էք՝ օբյեկտիվ ճշմարտության հարցը. ինձ թվում է՝ դա տանում է մյուս ծայրահեղություն: Եթե դու ասում էս, որ օբյեկտիվ ճշմարտություն ընդհանրապես գոյություն չունի ու չի կարող ունենալ՝ դա ստացվում է, որ մարդիկ ապրում են միջերի աշխարհում, այնինչ՝ օբյեկտիվ ճշմարտություն գոյություն ունի: Եթե մարդը չուտի, չգիտեմ, վեց օր՝ յոթերորդ օրը կմահանա, կամ ջուր չիմի, չգիտեմ, քանի օր՝ կմահանա, կամ էսքան ժամանակ չչնչի՝ կմահանա: Կամ չգիտեմ. ամենապարզ բաները՝ գրավիտացիայի օրենքը: Կամ ամենատարբեր բնագավառներում կարելի է տեսնել: Եթե դու չունես էդ հենակետը՝ էդ դեպքում դա դառնում է Թրամփի «ալտերնատիվ փաստեր»: Եվ եթե միայն առաջնորդվես տեսլականներով, որ իմ տեսլականը կամ իմ ձգտումը սա է, ուրիշինը՝ ուրիշ է, էդ դեպքում ոչ... Էդ դեպքում նույն քննադատական մտածողությունը ոչ մի իմաստ չունի, որովհետև

վերջ ի վերջո քննադատական, իմ կարծիքով՝ քննադատական մտածողության միակ նպատակը՝ **հասնել ինչ-որ չափով ճշմարտության բացահայտմանը**: Այսինքն, եթե մալազիական «Բոինգ»-ը թռել է A կետից B կետ և, չգիտեմ, մեջտեղում իրան խփել են, հնարավոր է պարզել, թե ո՞վ է խփել, ինչի՞ է խփել, ինչո՞վ է խփել, էդ գենքը որտեղի՞ց է եկել և ի՞նչ է տեղի ունեցել: Եթե դու անցնում ես ալտերնատիվ փաստերի, որ ըստ իմ տեսլականի՝ սենց, կամ մյուս տեսլականի՝ ինչ-որ այլ կերպ... իմ կարծիքով դու հողը քո ոտքերի տակից տանում ես. դա առաջինը: Միգուցե էդտեղ հակասություն չկա, բայց էդ ուզում էի ֆիքսել:

54:41 **ԳՏԳ** – Ոչ թե հակասություն չկա՝ ես ուղակի չեմ ասել, որ օբյեկտիվ ճշմարտություն չկա: Ես ասել եմ, որ մեծ առումով ճշմարտությունը, ոչ թե կոնկրետ փաստերի՝ ուրիշ մակարդակի հարց է:

54:52 **ԻՄ** – Օնթոլոգիական հարցերում. Աստված կա, թե չկա: (- Տրասցենդենտալ նույնիսկ, ոչ օնթոլոգիական): Կամ տրասցենդենտալ... (- Այո): Էդ այլ հարց է: (- Ես մենակ դա նկատի ունեի): Հա, ուղղակի ուզում էի ես շեշտել:

55:01 **ԳՏԳ** – Իսկ հենց որ ճշմարտությունը եկավ՝ պարզ է, որ էդ... Հենց դրա մասին ենք խոսում, որ էդ աշխարհայացքը...

55:05 **ԻՄ** – Եթե չկա, եթե դու հանում ես՝ աշխարհը դառնում է կարծիքների խոսակցություն, ինչը անիմաստ է:

55:08 **ԳՏԳ** – Այո, դրա մասին ենք հենց խոսում, որ աշխարհայացքը կառուցելու համար քեզ պետք է անընդհատ ստուգում և մենք դրա համար՝ էդ տելեոլոգիական նկարը ունենալու համար փաստեր ենք գտնում, որ մարդկությունը զարգանում է, որ ավելի քիչ կա սով, և այլն, և այլն:

55:25 **ԻՄ** – Ուղղակի ուզում էի մեկ անգամ ևս շեշտել: Կարող է ուրիշ մարդիկ էլ՝ մեզ դիտողները...

55:31 **ԳՏԳ** – Կխոսենք տրասցենդենտալի մասին. ես շատ եմ ուզում խոսել:

55:34 **ԻՄ** – Երկրորդ նկատառումն էլ ունեմ, որ ուզում եմ նշել. էս բաժակի մեջ թքելու պատմությունը: Իմ կարծիքով էդտեղ էլի խնդիր կա, որ ինձ թվում է՝ ես ու դուք էստեղ... Չէ, ի՞նչն է մեզ... Միգուցե տարբեր մոտեցումներ ունենք. կան օրինաչափություններ, որ բաժակի մեջ թքելը ոչ թե օրինաչափություն է, այլ բացառություն: Օրինաչափությունը էն է, երբ որ մարդուց մի բաժակ ջուր ես ուզում՝ որպես կանոն քեզ ջուր է բերում: Կան...

56:04 **ԳՏԳ** – Ջուրը փոքրին:

ԻՄ – Հա... Չէ, կան...

ԳՏԳ – Օրինաչափություն է. լավություն արա, ջուրը գցիր:

ԻՄ – Չէ, դա օրինաչափություն չի՝ դա ժողովրդական իմաստություն է, կամ չգիտեմ ինչ է, բայց օրինաչափությունը էն է, որ արևը ծագում է արևելքից ու մայր է մտնում արևմուտքում¹⁰: Կարող են լինել բացառություններ՝ արևի խավարում, բայց դա միայն ապացուցում է գոյություն ունեցող օրինաչափությունը: Նույնը, իմ կարծիքով, վերաբերում է զարգացումներին, նույնը վերաբերում է

¹⁰ Դատողություններ «Էլեկտրական Երևանի» ետևից՝ <http://gtergab.com/hy/news/publicism/thinking-aloud-about-electric-yerevan/100/>

ինչ-որ ցիկլերին, նույնը վերաբերում է աշխարհի օրենքներին, որ կան օրինաչափություններ: Եթե մենք էլ օրինաչափությունները ասում ենք, որ ամեն անգամ չկա որևէ կապող օղակ, ինձ թվում է դա մեզ տանում է որոշակի նիհիլիզմի դաշտ, որովհետև նույն, ասենք, ցեղասպանությունների հետ կապված կա ուսումնասիրությունը՝ Լենկինից սկսած մինչև էսօր, որ կա էլ պրոցեսի, պարտադիր չի «ցեղասպանություն» հենց անունը լինի, բայց բռնության զարգացման որոշակի...

57:09 **ՉՏԳ** – Հայերեն «curve»-ը չգիտեմ ոնց է: Կոր, կորագիծ:

ԻՄ – Հա, չգիտեմ, գրաֆիկ... Կոր: Կա ինչ-որ կոր: Հիմա. ամեն կոնկրետ դեպքում դա կարող է վարիացիաներ ունենա՝ տարբեր փոխվի: Բայց որ կա ինչ-որ օրինաչափություն՝ դա ակնհայտ է, ինչը վերաբերում է մնացած ամեն ինչին: Դրա համար ես չեի ասի, որ միշտ, ասենք, բաժակի ձևը... Եվ վերջ ի վերջո՝ բաժակը բաժակ է, ջուրը ջուր է, թքելն էլ թքել է, որպես բացառություն: Էս ուղղակի ուզում էի ես նշել:

57:39 **ՉՏԳ** – Դու փաստորեն ասում ես էն, ինչ ես եմ ասում, որովհետև... Դե դու չգիտեմ ինչի էդպես չհասկացար, որովհետև օրինաչափությունը հենց այն է, որ ցանկացած հրաման վերից նույն կերպ չի կատարվում, ինչպես որ տրվում է: Դա, հենց դա է օրինաչափությունը: Օրինաչափություն է նաև այն, որ հաճախ, որոշակի պայմաններում՝ որոշակի մղումներ, որոշակի ստիմուլներ են ռեակցիան կառաջացնեն, որը դու սպասում ես: Ուրեմն, եթե դա խնդրանք է՝ շատ ավելի հավանական է, որ նույնությամբ կատարվի. էն էլ հավանական չի միշտ, բայց ավելի հավանական է: Օրինաչափությունն է այն, որ, ես շատ հաճախ եմ դա ասում, և դա հաստատում է մեծ պրոյեկտի գաղափարը, որ երբ դու դուրս ես գալիս փողոց աշխարհի մեծ մասում՝ չես վախենում, որ քեզ կսպանեն ճամփին դեմը եկածը, այլ կարող ես բարևել, և նա էլ կբարևի: Դա օրինաչափություն է. էդ քո ասածը դրա մասին է: Բայց էն, որ հրամանը, իշխի հարաբերությունը սկսում է խախտել էդպիսի օրինաչափությունները՝ դա նույնպես օրինաչափություն է: Բայց էն, որ պետք է հասկանալ տարբերությունը գաղափարի, լեզվի, խոսքի, տեքստի և իրականության միջև՝ դա էլ է շատ կարևոր, և դա էլ է մեր էսօրվա խնդիրներից: Դա արդեն ոչ թե արխայիկ մտածողությունն է՝ չհասկանալը, այլ, էսպես ասած, պոստ-, պոստմոդեռն, էս «օնլայնային մտածողություն», երբ վիրտուալը խառնվում է իրականի հետ: Ռեալի զգացումը դա սկզբունքային, կարևորագույն իմ կարծիքով մարդկային հասկություններից մեկն է, որը հիմա սկսել են հարցականի մեջ դնել, ասելով հենց էլ «alternative truths», և այլն, և այլն, որ վիրտուալ աշխարհը կարող է փոխարինել իրական աշխարհին:

Մարդը ունի ռեալի զգացում: Դու կարող ես այն բթացնել իրա մեջ, բայց նա հասակորեն տարբերում է: Երբ նա նայում է նկար՝ նկարը պերսպեկտիվա չունի: Ինչքան էլ դա դառնա եռաչափ և այլն, վիրտուալ իրականություն՝ դա շատ հեռու է դեռ ռեալի, նույն ռեալին համապատասխանելուց, ու դա շատ պարզ պատճառներով: Դրա համար սա շատ կարևոր բան է: Եվ ուրեմն էլ հենց օրինաչափությունները տեսնելը, դրանց հավատալը, դրանց վրա հիմնվելը շատ կարևոր է: Բայց էստեղ կան օրինաչափություններ և կան «էսպես ասած» օրինաչափություններ: Օրինակ՝ «մարդը մարդուն բարեկամ է» օրինաչափություն է, բայց նաև «մարդը մարդուն գայլ է» օրինաչափություն է: Օրինաչափություն է, թե՞ օրինաչափություն չէ: Այսինքն՝ մենք այ էլ օրինաչափությունը, օրենքը, արևի դուրս գալը, ներս գնալը՝ էդ սաղ օրենքային մոտեցումը շատ կարևոր է, բայց ինքը ունի մի խնդիր սրա տեսակետից. ինքը շատ հեշտ օգտագործվում է, դրա համար նայած ո՞ր օրենքն էս տարբերում: Շատ հեշտ օգտագործվում է արխայիկ մտածողություն ունեցողների կողմից, կամ էս մտածողությունը սպեկուլյատիվ նպատակներով շահագործողների կողմից: Եվ էլ թեզերից մեկն է հենց իմ բերած էն թեզը, որ ես ասեցի, որ «Հայաստանը դե հիմա Աֆրիկա է էլի, սենց էլ լավ է, որ արվի»: Տեսեք, ինչ

հետաքրքիր է դա, որովհետև կարող է և ճիշտ է: Կարող է մեկը դիտարկի՝ էստեղ ի՞նչ պրոցեսներ էին կատարվում, էստեղ, ու ասի. «Տեսե՞ք՝ ինչ նման է իրար», և մեկ է. դա մեթոդաբանապես սխալ դրույթ է:

Նույն կերպ օրինաչափությունների մասին խոսելիս պատմության նկատմամբ վերաբերմունքը: «Պատմությունը ցիկլային է». ասում է արխայիկ մտածողություն ունեցող մարդը, և դա կարող է նաև ասել շատ խոշոր օբյեկտիվիզմին հարող գիտնականը, բայց նրանց թեզերը կունենան տարբեր տեսակարար կշիռ: **Արխայիկ մտածողություն ունեցող մարդը սպեկուլյատիվ կամ այլ նպատակներով, կամ գուցե անկեղծ նպատակներով, նա ասում է «Ոչինչ չի փոխվում», ասելով՝ որ «պատմությունը ցիկլային է»:** Ասում է, օրինակ. «Ռուսաստանը դարեր ի վեր եղել է այդպիսի երկիր՝ անընդհատ բռնապետություն, կարճ հալոցք՝ ռեֆորմների ժամանակաշրջան, հետո նորից երկարատև բռնապետություն: Եվ դա դարեր ի վեր եղել է և այդպես էլ լինելու է: Ուրեմն սպասեք մինչև բռնապետության երբանը՝ ճակատագիրը լրանա, ու էլի կգա մի փոքրիկ հալոցքի ժամանակ, որի ժամանակ դուք բոլորդ մի քիչ կծաղկեք՝ զաղափարները կծաղկեն, իսկ հետո էլի կսկսվի ռեակցիան». և այլն, և այլն: Ուրեմն՝ այ էդ թեզը պարզ է, որ մարդուն ուժասպառ անող թեզ է, նրա կարիքը չկա:

1:03:04 **Էլեն Գրիգորյան (ԷԳ)** – Ուղղակի եղպես ցիկլայնության հետ կապված որ ասացիք, կա նաև սպիրալաձև մոտեցումը չէ՞, որը ասում է, որ իրականում կա առաջընթացը: Ուղղակի... Ու դա ես նմանեցնում եմ ստրուկտուրալիզմին, որ կան որոշակի ստրուկտուրաներ, որոնք միշտ մնում են, ու դրանց հիման վրա բայց անընդհատ ինչ-որ նոր բան է կառուցվում:

1:03:24 **ԳՏԳ** – Շատ ավելի լավն է սպիրալի... Պարզ է, որ դա հսկայական զարգացում էր աշխարհի մեջ, երբ դիալեկտիկան որպես էսպես, ուրեմն, գալար, պարույր ընկալվեց: Շատ ավելի լավն է, բայց մենք պիտի մի շատ կարևոր բան հասկանանք, որ **դրանք բոլորը մտավոր սխեմաներ են՝ մեր նկարներն են, որոնք դրվում են իրականության վրա այն համակարգելու նպատակով:** Այսինքն՝ դու պարզապես ունենում ես մեկ կամ երկու տեսակի մարդ: Մեկը ասում է՝ էսպիսի, ուրեմն, շրջապտույտ է՝ մշտական, մյուսը ասում է՝ ո՛չ, դա ա՛յ էսպիսի (պարույրի) տեսք ունի: Բայց եղ երկուսն էլ դրված են ինչ-որ որոշակի մարմնի վրա, որը կոչվում է «կյանքի ընթացք»: Եվ նրանք ասում են. «Պատմության փիլիսոփայություն ենք մենք ստեղծում, էս կյանքի ընթացքը՝ ապացույցներ գտնելով, դիտարկելով էսպես, կամ դիտարկելով էսպես»: Իսկ էս մարմինը՝ էս «կյանքի ընթացք» կոչվածը, կարող է նաև հազար ու մի այլ կերպ մեկնաբանվել: Եվ եղ բոլոր մեկնաբանությունները կարող են ունենալ ճշգրտության... Դե ճշմարտությունը մեծ բան է, բայց ասենք ճշգրտություն՝ եղ «evidence»-ի հետ կապված բառը, փաստի հետ կապված բառը. (ճշգրտության) կոմպոնենտ, - կամ՝ չունենալ: Ավելի հեռու լինել ճշգրտությունից կամ ավելի մոտիկ լինել ճշգրտությանը: Ինչքան ավելի համապարփակ դու տեսություն ստեղծեցիր ճշգրտության տեսակետից՝ էնքան ավելի օգուտ կլինի: Բայց մենք գիտենք շատ գիտնականներ հենց պատմության ասպարեզում, ինչպես, ասենք, [Շպենգլերը](#) կամ [Թոմսին](#), որոնք ստեղծում էին էսպիսի տրամաբանական մոտեցումներ. և դրանք չեն արդարանում: Եվ Մարքսը, որը ասաց, որ կար նախնադարյան համայնակարգ... Հոյակապ տրամաբանական մոտեցում... Հետո եղավ ֆեոդալական... Ստրկատիրական, ֆեոդալական, բուրժուական, կապիտալիստական, սոցիալիստական, և պիտի լինի՝ կոմունիստական: Ինչ լավ կլինեք, եթե եղպես տրամաբանվեք: Ու ամեն ինչ մինչև Մարքսի կյանքի ժամանակը շատ լավ տեղավորվում էր եղ տրամաբանության մեջ: Շատ հոյակապ տեսություն է, որ ամեն ինչ բացատրում է: Եվ **մենք գիտենք, որ հասարակական երևույթների մեջ կա եղ խնդիրը. որ կանոններ, օրինաչափություն կարող ես դիտարկել, փորձ պատմությունից՝ կարող ես ստանալ պատմության**

տեսության հիման վրա: Կանխագուշակել՝ չես կարող: Որ հասարակական գիտությունների մեջ գրեթե չկան էդպիսի օրենքներ: Դա շատ կարևոր է: Այ, դա էլ է արխայիկի բանը: Եթե նա ասում է՝ սա կյոք է, և նույնիսկ եթե ասում է՝ սա սպիրալաձև է, և միայն, ու ամեն ինչ բացատրելի է դրանով՝ դու չես կարող: Շատ քիչ կան, և գրեթե չկան համապարփակ իմաստով, ճշմարտության մակարդակով՝ չկան ընդհանրապես, - ճշգրտության մակարդակով, ստուգելիության մակարդակով՝ շատ քիչ կան հասարակական, հասարակագիտական օրենքներ, ինչպիսին բնության օրենքներն են: Հենց դրանով էլ էս գիտությունը դժվար բան է: Եվ մեկը, ինչպես գիտենք, Կանտի կանխագուշակումն է, որ նա ասաց, որ «Լուսավորյալ պետությունները միմյանց հետ չեն պայքարում»: Դա ձևավորիտեցին «Ժողովրդավարական պետությունները միմյանց հետ չեն պատերազմում» թեզի, և ստատիստիկորեն տեսնում են, որ առայժմ դա հաստատվում է և երևի կհաստատվի: Քիչ կան, իրականում քիչ կան: Մյուսը իմ իմացածներից Պարետոյի բանն է՝ ութսուն-քսանի էդ օրենքը:

1:07:05 **ԻՄ** – Կա, օրինակ, [Ամարսյա Սենի](#) թեզը, որ դեմոկրատական պետություններում ծայրահեղ սով չի լինում:

1:07:14 **ԳՏԳ** – Հա, դա հետևանքային գործողություն է:

ԻՄ – Չէ, ուզում եմ ասել՝ տարբեր բաներ կան, բայց եթե... Էսպես, եթե էս ամեն ինչը պարզ լիներ՝ նույն կրոնները վաղուց գոյություն չէին ունենա, որովհետև... Հա, դա էլ մեկ այլ...

1:07:28 **ԳՏԳ** – Արժեքային թեզեր են դրանք:

ԻՄ – Արժեքային թեզեր են, բայց այնուամենայնիվ... Իմ կարծիքով էս չգիտեմ՝ էդպես է, էդպես չի, ոչ ոք չի կարող դա ստուգել: Իմ կարծիքն եմ ասում՝ դա կարող է շատ արխայիկ է հնչում, բայց էս կարծում եմ, որ հասարակագիտության մեջ կամ մարդկային հարաբերությունների, մարդկային սոցիումի մեջ և այլն՝ գոյություն ունեն էդ օրինաչափությունները: Հակառակ դեպքում տնտեսագիտությունը որպես առարկա չէր զարգանա:

1:07:56 **ԳՏԳ** – Եկեք օրենքը օրինաչափությունից տարբերենք:

ԻՄ – Չէ, օրենքի մասին չի խոսքը՝ օրինաչափության մասին է:

1:08:00 **ԳՏԳ** – Օրինաչափությունները գոյություն ունեն՝ էդտեղ ոչ մի հարց չկա:

ԻՄ – Ամբողջ տնտեսագիտության հիմքը մարդկային վարքագծի ուսումնասիրության, տնտեսական վարքագծի վրա... հիման վրա է:

1:08:10 **ԳՏԳ** – Մարդը էդպես չի վարվում, ինչպես որ տնտեսագիտությունը հայտարարում է:

1:08:16 **ԻՄ** – Չէ, ինչ-որ դեպքերում վարվում է, թե չէ ոչինչ չէր վաճառվի, ոչինչ չէր զարգանա:

1:08:20 **ԳՏԳ** – Ճիշտ է: Մյուս... Այո: Տնտեսագիտություն կոչվածը, էդ մասը, որ դու նշում էս մարդկային վարքի հետ կապված... Չէ, տնտեսագիտության մի մասն է, մյուս մասը նկարագրողական է, թե ի՞նչ է տեղի ունենում: Իսկ մի մասը՝ դա ռացիոնալ մարդու վարքի վրա, ուրեմն, հիմնված բացատրություններն են, և էդ ռացիոնալ մարդը գոյություն չունի իրականում: Բայց դա Կանտի օրենքի պես օրենքի նշույլ ունի իր մեջ: Ինչո՞ւ. որովհետև եթե ռացիոնալ մարդը ուզում է լինել ռացիոնալ, [կոոպերատիվ կոմունիկացիայի](#) սկզբունքներին է համապատասխանում իր վարքը, որը մենք քննարկել ենք, թե ի՞նչ է կոոպերատիվ կոմունիկացիան: **Եթե նրա ինտերակցիաները՝ մյուս**

նույնպիսի մարդու հետ, նույնպես ռացիոնալ և կոռպորատիվ կոմունիկացիայի վրա հիմնված, շատ են ու անվերջ՝ կամ անհայտ է, թե ինչքան են լինելու՝ այդ դեպքում նա կսկսի վարվել բարյացակամ կերպով դեպի դիմացինը: Դա հաստատվում է մաթեմատիկորեն: Բայց հիմնականում... Այսինքն՝ տնտեսագիտությունը իրականում ունի մի... Նու, համենայն դեպս էդ ազատ-շուկայական տնտեսագիտությունը՝ ունի որոշակի սխեմա, որի շուրջ դիտարկում է: Ավելի շուտ նա ունի իդեալ, որի տեսակետից դիտարկում է: Եվ էդ իդեալը շատ է քննադատվում, որովհետև... Նու, ասենք ռացիոնալ մարդը պիտի լինի էգոիստ, պիտի լինի կուտակող, իսկ դա բացարձակապես պարտադիր չի: Էնպես որ, Բեյլա ջան, բանն այն է, որ դու էն որ որպես առարկություն ես դրսևորում, իրականում լրիվ ճիշտ են, ուղղակի պետք է տարբերակել օրինաչափությունը օրենքից: Չնայած դրանք նույն տիրույթի մասեր են, բայց խոսքը, կանոնը, անունը, օրենքը, օրինաչափությունը, «noumenon» դրանք տարբեր... Հա: Ուրեմն՝ մյուսը. օրինաչափությունը թույլ չի տալիս, մինևույն է թույլ չի տալիս կանխագուշակել ապագան, և դա հասարակական գիտությունների դժվարությունն է: Հիմա դու ասում ես, որ ոչ, որովհետև եթե մարդ ունի տելեոլոգիա՝ նա կարող է որոշակի սահմաններում ապագան կանխագուշակել, իհարկե եթե գլխին չընկավ բան: Բայց իրականում՝ չի կարող, ինչպես գիտենք, որովհետև պրոբլեմն այն է, որ նա անսպասելիորեն մահացող էակ է:

Դա է խնդիրը: Բայց իհարկե էս տեսլականի լինելու դեպքում՝ մարդը ավելի գիտական է, ավելի ռեֆլեկտիվ է, ավելի հստակ ու ճիշտ է տարբերակում իրականությունները, ավելի ունի տարբերակման կարողություն ռեալը վիրտուալից, և այլն:

Վերջ 1-ին մասի

Սղագրությունը՝ Տաթևիկ Ղահրամանյանի

Սղագրության ավարտը՝ ապրիլի 1, 2018թ.

Խմբագիրներ՝ Գևորգ Տեր-Գաբրիելյան, Անի Թովմասյան

Խմբագրության ավարտը՝ ապրիլի 17, 2018թ.

Հետզրություն

Այս գրույցում լրիվ չպարզաբանվեց «օբյեկտիվ ճշմարտության» հարցը. այն թեզը, որ մարդը թե տեսլական և նպատակ չունի, չի կարող ունենալ քննադատական մտածողություն՝ չի բացառում օբյեկտիվ ճշմարտության գոյությունը: Այն թեզը, թե մարդիկ միայն կամ մեծ մասամբ տեսականներով և նպատակներով են առաջնորդվում, և դա ստեղծում է ազատ կամքի դրսևորման որոշակի սուբյեկտիվ իրադրություն՝ կրկին չի բացառում օբյեկտիվ ճշմարտության գոյությունը, ինչն Իգաբեյլա Սարգսյանը շատ լավ ձևակերպեց:

Ինչը մնաց չվերլուծված՝ այն է, որ օբյեկտիվ ճշմարտությունը հաճախ խառնում են դետերմինիզմի հետ. հենց դա՛ է, որ հանդիսանում է կոպիտ մեթոդաբանական սխալ: Օբյեկտիվ ճշմարտությունը չի բացառում և, ընդհակառակը, հաստատում է մարդու ազատ կամքի գոյությունն ու հնարավորությունները, թեկուզ մենք չգիտենք, թե ո՞ր չափով է այդ կամքն ազատ մինչև վերջ:

Մակայն այս «չիմանալը» չի կարող սահմանափակել օբյեկտիվ գիտական ուսումնասիրությունները. այն, ի վերջո, անկարևոր է, քանի որ մենք գործում ենք, նպատակներ ենք դնում, ծրագրում ենք այն տիրույթում, որը ճանաչելի է: Տեսլական և նպատակ ունենալը, նպատակաբանական մոտեցումը ոչ թե երկու սուբյեկտիվ աշխարհների ընդհարում են նշանակում միայն, այլև՝ այդ ընդհարման մեջ «հաղթող»։ Նա, ում նպատակներն ու տեսլականներն ավելի են համապատասխանում աշխարհի «իրական տեսքին», այսինքն՝ օբյեկտիվ ճշմարտությանը, նա, ով ավելի լավ է «հաշվարկում» հնարավոր միջոցները նպատակին հասնելու՝ իր դրած նպատակների իրագործման մեջ ավելի հաջողակ է: Երբ նպատակը դառնում է գործողության պատճառ՝ դա չի նշանակում, որ այն խախտում է բնական պատճառա-հետևանքային կապերը. այն դրանք օգտագործում է իր իմացած լավագույն ձևով: Բարդ հարաբերակցություն է ստեղծվում մարդու կամքից ելնող «հետևանքա-պատճառային» կապի (նպատակ՝ որից գործողություն) և բնական պատճառա-հետևանքային կապի միջև: Այս հարաբերակցությունը հետազոտելի է քիչ թե շատ օբյեկտիվ պրոցեսներով, բավական խորությամբ: Մարդկային գործունեությունը հիմնված է այդ դրույթի վրա:

Գ. Տեր-Գաբրիելյան, ապրիլ 17, 2018